

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում շահագործվող McAfee; LUNA SA 1700 «HSM Network Hardware Security Module»; **CyberArk** և **Symantec Endpoint Protection** սարքավորումների և ծրագրային ապահովումների ուղեկցման արտոնագրերի ձեռքբերման նպատակով կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթի կազմակերպման մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում շահագործվող McAfee; LUNA SA 1700 «HSM Network Hardware Security Module»;
CyberArk և **Symantec Endpoint Protection** սարքավորումների և ծրագրային ապահովումների ուղեկցման արտոնագրերի ձեռքբերման նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին և ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական և ֆինանսական միջոցներ:

Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
- 2) Մասնագիտական փորձառություն.
- 3) Տեխնիկական միջոցներ.
- 4) Ֆինանսական միջոցներ.
- 5) Աշխատանքային ռեսուրսներ:

Մրցութային առաջարկները կարող են ներկայացվել ինչպես մեկ, այնպես էլ բոլոր լրտերի համար միասին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձևով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով: Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչև 2021թ. **Հունվարի 25-ին ժամը 16:00-ն** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան փողոց 6 հասցեով, **2021թ. Հունվարի 29-ին ժամը 16:00-ին**:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2021թ. **Փետրվարի 8-ին ժամը 16:00**:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գնումների համակարգման ծառայություն, հեռ. (+37410) 59-26-74; ներքին՝ 18-02, 18-61, 18-62, 18-64, էլ. փոստ – procurement@cba.am:

17.12.2020թ.

ՀՀ ԿԲ Հասարակայնության հետ կապերի ծառայություն

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում շահագործվող
McAfee; LUNA SA 1700 «HSM Network Hardware Security Module»;
CyberArk և Symantec Endpoint Protection սարքավորումների և
ծրագրային ապահովումների ուղեկցման արտոնագրերի ձեռքբերման
նպատակով կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթի
կազմակերպման մասին**

1. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1.1. Սույն հրապարակային ծանուցմամբ կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում շահագործվող McAfee սարքավորումների և ծրագրային ապահովումների ուղեկցման արտոնագրերի (Լոտ 1), LUNA SA 1700 «HSM Network Hardware Security Module» գաղտնագրման բանալիների ստեղծման և պահպանման անվտանգության համակարգի ուղեկցման արտոնագրի (Լոտ 2), CyberArk համակարգի ուղեկցման արտոնագրի (Լոտ 3) և Symantec Endpoint Protection հակավիրուսային համակարգի ուղեկցման արտոնագրի (Լոտ 4) ձեռքբերման համար կազմակերպություն և/կամ կազմակերպություններ ընտրելու նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կազմակերպված հրապարակային մրցույթի (այսուհետ՝ Հրապարակային մրցույթի) անցկացման հետ կապված հարաբերությունները:

1.2. Հրապարակային մրցույթի կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Պատվիրատու):

1.3. Հրապարակային մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի կամ մասնակիցների հետ Պատվիրատուն կնքում է ծրագրային ապահովումների ուղեկցման արտոնագրերի ձեռքբերման և սպասարկման պայմանագրեր:

1.4. Հրապարակային մրցույթի առարկայի տեխնիկական և քանակական բնութագրերը ներկայացված են սույն հրավերին կից հավելվածով 1-ով: Ձեռք բերվող ծրագրային ապահովումների ուղեկցման արտոնագրերի տրամադրման ժամկետները նշված են յուրաքանչյուր լոտի համար՝ սույն հրավերին կից հավելվածով 1-ով:

2. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Մրցույթին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին ներկայացնում է մրցույթի հայտ: Մրցույթի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

2.2 Մասնակիցը չի կարող նույն մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ, բացառությամբ սույն հրավերի 3.5 կետի կամ 5-րդ գլխով նախատեսված հայտի փոփոխում ներկայացնելու դեպքի:

2.3. Մրցութային առաջարկները կարող են ներկայացվել ինչպես մեկ, այնպես էլ բոլոր լոտերի համար:

2.4. Մրցույթի հայտով ներկայացվող տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացվում են երկու փակ և սոսնձված ծրարներում: Ծրարները և հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս կողմից լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե մրցույթի հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

2.5. Մրցույթի հայտի առաջին ծրարով ներկայացվում են միայն պայմանագրի կնքման նպատակով առաջարկվող պայմանները (մասնակցի կողմից ներկայացվող առաջարկը):

Մրցույթի հայտի առաջին ծրարի վրա հայտը կազմելու լեզվով կատարվում են հետևյալ գրառումները.

1. «ՀՀ կենտրոնական բանկ, ք. Երևան, Վ. Սարգսյան 6» բառերը.
2. «**Ուղեկցման արտոնագրեր» բառերը.**
3. «ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բառերը.
4. «ԶԲԱՅԵԼ ՄԻՆԶԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՅՄԱՆ ՆԻՍԸ» բառերը.
5. մասնակցի անվանումը, գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

2.6 Առաջին ծրարը պետք է պարունակի հետևյալ տվյալները՝

1. Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի ցանկ,
2. Գնային առաջարկ, որը պետք է լինի ֆիքսված, ոչ գործոնային և իր մեջ ներառի բոլոր տեսակի ծախսերը և հարկերը, այն պետք է ներկայացվի ՀՀ դրամով:
3. Վճարման պայմանները (կանխավճարի չափը, վճարումների կատարման կարգը), և հնարավոր զեղչերի կիրառման (գնային) քաղաքականությունը:

2.7. Մրցույթի հայտի երկրորդ ծրարի վրա հայտը կազմելու լեզվով կատարվում են հետևյալ գրառումները.

1. «ՀՀ կենտրոնական բանկ, ք. Երևան, Վ. Սարգսյան 6» բառերը.
2. «**Ուղեկցման արտոնագրեր» բառերը.**
3. «ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բառերը.
4. «ԶԲԱՅԵԼ ՄԻՆԶԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՅՄԱՆ ՆԻՍԸ» բառերը.
5. մասնակցի անվանումը, գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

2.8. Երկրորդ ծրարը պետք է պարունակի հետևյալ տվյալները.

1. Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկ;
2. Մատակարարման ժամկետներ;
3. Տեղեկանք ՀՀ հարկային մարմնից գործունեության վերջին ժամանակահատվածում և տվյալ պահին մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած պարտավորությունների վերաբերյալ (միայն ռեզիդենտների համար);
4. Արտադրող ընկերության կամ նրա պաշտոնական ներկայացուցչության կողմից մասնակցին տրված հեղինակայնացման հավաստագիր (MAF - Manufacturers Authorisation Form) տվյալ մրցույթով մատակարարման, տեղադրման և կարգաբերման աշխատանքների կատարման վերաբերյալ;
5. Մասնակցի պետական ռեգիստրի կողմից տրված վկայականի պատճեն;
6. Իր իսկ կողմից ստորագրված և կնքված հայտարարություն այն մասին, որ մասնակիցը համապատասխանում է սույն հրավերի 6-րդ կետով սահմանված որակավորման չափանիշներին,
7. Մրցույթի նախավճարը հավաստող փաստաթուղթ (սույն հրավերի 7-րդ կետ),
8. իր իսկ կողմից ստորագրված և կնքված տեղեկանք այն մասին, որ դատական կարգով սնանկ ճանաչված չէ, լուծարման գործընթացում չի գտնվում,
9. իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին
10. իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն

տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին,

11. այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները;
12. 2019թ.-ի հարկային տեսչություն ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը, (իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն կամ շահույթ/վնասի հաշվետվություն, սեփական կապիտալի շարժի մասին հաշվետվություն, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն) (միայն ռեզիդենտների համար):

3. ՄՐԾՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱԳՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1 Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին առձեռն կամ փոստային ծառայության միջոցով պատվիրված նամակով: Ներկայացված մրցույթի հայտերն ընդունում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Աշխատակազմի փաստաթղթերի շրջանառության բաժինը:

3.2 Մասնակցի պահանջով մասնակցին տրամադրվում է ՀՀ կենտրոնական բանկի Աշխատակազմի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ստորագրված և կնքված համապատասխան տեղեկանք՝ մրցույթի հայտն ընդունելու մասին, որում նշվում է՝ մասնակցի անվանումը (մասնակցի ցանկությամբ ծածկանունը), հայտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, հայտը ընդունող աշխատակցի անունը, ազգանունը և պաշտոնը: Մրցութային հայտը պատվիրած նամակով ուղարկելու դեպքում ՀՀ կենտրոնական բանկի Աշխատակազմի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ստորագրված և կնքված համապատասխան տեղեկանքը մրցույթի մասնակցին ուղարկվում է նամակով կամ ֆաքսով:

3.3 Մրցույթի Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված մրցույթի հայտերի՝ վերջնական ժամկետից ուշ կամ բացված տեսքով կամ այլ կերպ վնասված ստանալու համար:

3.4 Հրապարակային մրցույթին վերաբերող բոլոր փաստաթղթերը կազմվում են հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներով:

3.5 Մրցույթի մասնակիցները մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը, կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտերը (հրաժարվել մրցույթին մասնակցելուց): Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է սույն ծանուցմամբ հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով համապատասխան ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում այդ մասին ծանուցումը կարող է ուղարկվել նամակով կամ ֆաքսով:

4. ՄՐԳՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՕՐԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԸ

4.1 Մրցույթի հայտերի բացումը կկատարվի մրցույթի հանձնաժողովի նիստում՝ 2021թ. **Հունվարի 29-ին ժամը 16:00** ք.Երևան, Վ. Սարգսյան 6 հասցեում:

4.2 Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2021թ. **Փետրվարի 8-ին ժամը 16:00**:

4.3 Մրցութային հանձնաժողովը մրցույթի հայտերի բացման օրը մրցույթի մասնակիցների ներկայացրած հայտերի ուսումնասիրությունից հետո կարող է փոփոխել հրավերով նախատեսված մրցույթի հայտերի ամփոփման օրը և ժամը, դրա մասին ծանուցելով մասնակիցներին:

5. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՄԲ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

5.1 Մրցույթի պայմաններում, ինչպես նաև Մրցույթի հայտերը բացելու օրվա և ժամի վերաբերյալ փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն կատարում է համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ հրապարակային ծանուցման մեջ (այսուհետև՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) և այն տեղադրում է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում (www.cba.am):

5.2 Հրապարակային ծանուցման փոփոխությամբ թույլատրվում է կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները Պատվիրատուն հրապարակային ծանուցման փոփոխության դեպքում չի կրում Մասնակիցների կողմից կրած վնասների ռիսկը:

6. ՄՐԳՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

6.1 Հրապարակային մրցույթին մասնակցող Մասնակիցը պետք է բավարարի սույն կետով սահմանված որակավորման ներքոհիշյալ չափանիշներին՝

Մասնակիցը.

ա. չպետք է դատական կարգով լինի անվճարունակ ճանաչված, չպետք է գտնվի լուծարման գործընթացում, չպետք է արգելանքի տակ ունենա պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.

բ. չպետք է մրցույթի հայտը ներկայացնելու օրվան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ունենա ժամկետանց պարտքեր՝ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով.

գ. կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում չպետք է՝

1. դատապարտված լինի տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

2. գնման պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած լինի կեղծ տվյալներ,

6.2 Մասնակիցը համարվում է չորակավորված, եթե նրա՝ սույն ծանուցմամբ ներկայացվող որակավորման հատկանիշների մասին տվյալները չեն համապատասխանում սույն հրավերի 6.1 կետով սահմանված չափանիշներին:

7. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐԳՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆԱԽԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ, ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

7.1 Մասնակիցը, մրցույթին մասնակցելու համար կատարում է նախավճարի մուծում, յուրաքանչյուր լոտի համարը նախավճարի չափը կազմում է 100.000 ՀՀ դրամ:

7.2 Մասնակիցն իրավունք ունի, մինչև մրցույթի հայտը ներկայացնելը, պահանջել հաստատելու մրցույթի համար վճարված նախավճարի ընդունված լինելու հանգամանքը, որին կպատասխանվի նման հարցում ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում:

7.3 Մրցույթի նախավճարը ներկայացնելու դեպքում այն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ կենտրոնական բանկի N 103001702119 հաշվին, իսկ վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնել մրցույթի հայտի երկրորդ ծրարով:

7.4 Մրցույթի նախավճարը չի վերադարձվում և այն գանձվում է հոգուտ Կենտրոնական բանկի, եթե այն ներկայացնողը հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ սույն հրավերի 9.3 կետի համաձայն զրկվում է գնման պայմանագիր ստորագրելու իրավունքից:

7.5. Բացառությամբ սույն բաժնի 7.4-րդ կետում նշված դեպքերի «մրցույթի նախավճարը գնման պայմանագիրը կնքվելուց, իսկ մրցույթը չկայացած հայտարարվելուց կամ մրցույթի հայտը մերժվելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում է այն ներկայացնողին:

8. ՄՐԳՈՒՅԹԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼԻՔ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

8.1 Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել մրցույթի ծանուցման պարզաբանում: Սույն ծանուցման վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար Մասնակիցը կարող է դիմել Պատվիրատուին: Այդպիսի պարզաբանումների պահանջները կարող են ներկայացվել ոչ ուշ, քան մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ:

8.2 Պատվիրատուն պարզաբանումը տրամադրում է հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հրավերի 8.1 կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է մրցույթի հրավերի բովանդակության շրջանակից:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1 Մրցույթի հանձնաժողովի որոշման հիման վրա Պատվիրատուն ընտրված մասնակցի հետ կնքում է գնման պայմանագիր:

9.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելուց հետո, հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով գնման պայմանագիր կնքելու առաջարկը և գնման պայմանագրի նախագիծը:

9.3 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և գնման պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում գնման պայմանագիրը, ապա նա զրկվում է գնման պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Այդ դեպքում Պատվիրատուն գնման պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացնում մրցույթում երկրորդ, իսկ վերջինիս կողմից առաջարկը չընդունվելու դեպքում երրորդ տեղը զբաղեցրած Մասնակցին: Պայմանագիր կնքելու առաջարկ ստացած, սակայն պայմանագիրը ստորագրելուց հրաժարված Մասնակիցը

զրկվում է մրցույթի հայտի և պայմանագրի կնքման ապահովումը հետ ստանալու իրավունքից:

10. ՄՐԳՈՒՅԹԸ ԶԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

10.1 Մրցութային հանձնաժողովը մրցույթը չկայացած է հայտարարում, եթե՝

- մրցույթի հայտերից ոչ մեկը չի համապատասխանում սույն իրավերի պայմաններին.
- ոչ մի հայտ չի ներկայացվել.
- մասնակիցների առաջարկած պայմանները մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ չեն ապահովում սույն ծանուցմամբ նախատեսված ծառայությունների մատուցման պայմանները.
- դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.
- գնման պայմանագիր չի կնքվում:

10.2 Մրցույթը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են Մասնակիցներին:

10.3 Մրցույթը չկայացած հայտարարվելուց հետո հրապարակվում է հայտարարություն՝ նշելով մրցույթը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

11. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ և ԿԱՐԳԸ

11.1 Յուրաքանչյուր անձ ունի բողոքարկման իրավունք, եթե հայտարարում է, որ Պատվիրատուի մրցութային հանձնաժողովի գործողությունների հետևանքով կրել է կամ կարող է կրել վնասներ:

11.2 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի՝

ա) բողոքարկել Պատվիրատուի մրցութային հանձնաժողովի գործողությունները ՀՀ կենտրոնական բանկի խորհրդին.

բ) դատական կարգով բողոքարկել Պատվիրատուի մրցութային հանձնաժողովի գործողությունները:

ՉԱՓԱՐԱԺԻՆ/ԼՈՏ 1

McAfee սարքավորումների և ծրագրային ապահովումների ուղեկցման արտոնագրերի տեխնիկական պայմաններն ու բնութագրերը

Անվանում	Քանակ	Արտոնագրի սկիզբ	Արտոնագրի ավարտ
MFE DLP 5500 Copper Appl 1Yr BZ + ARMA	1	29.12.2020	28.12.2021
MFE Event Receiver 1270 1Yr BZ+ARMA	1	28.12.2020	27.12.2021
MFE Network Sec 1450 Sensor 1Yr BZ +ARMA	4	16.12.2020	15.12.2021
MFE Net Sec IPS-NS5100 Appliance	2	15.12.2020	16.12.2021
MFE Total Protection for DLP SW 1Yr BZ	300	29.12.2020	28.12.2021
MFE Network Sec Starter Mngr 1Yr BZ	2	27.12.2020	26.12.2021
MFE Net Sec Mngr Start SW 1:1 IPS-NS5100	1	15.12.2020	16.12.2021
MFE Complete EP Protect BUS CEB	900	16.12.2020	15.12.2021

ՉԱՓԱՐԱԺԻՆ/ԼՈՏ 2

LUNA SA 1700 «HSM Network Hardware Security Module» գաղտնագրման բանալիների ստեղծման և պահպանման անվտանգության համակարգի ուղեկցման արտոնագրի տեխնիկական պայմաններն ու բնութագրերը

Անվանում	Քանակ	Արտոնագրի սկիզբ	Արտոնագրի ավարտ
<p>HSM – Network Hardware Security module LUNA SA 1700</p> <ul style="list-style-type: none"> Luna SA 1700, Remote PED Bundle (2HSMP, CL,SW 5.2.3, FW 6.2.1/6.10.2, Remote PED, 20 PED KEYS, Backup HSM) 5 Partitions Upgrade, Factory Install, Luna SA Backup Partition Upgrade License (5) Licence for each additional host to connect to networked HSM) 	1	01.01.2021	31.12.2021

ՉԱՓԱՐԱԺԻՆ/ԼՈՏ 3

CyberArk համակարգի ուղեկցման արտոնագրի տեխնիկական պայմաններն ու բնութագրերը

Անվանում	Քանակ	Արտոնագրի սկիզբ	Արտոնագրի ավարտ
CyberArk (CyberArk Privileged Account Security) համակարգի ուղեկցման արտոնագրեր. EMEA Maintenance (MAINT-EU24X7), 24/7 vendor support, 1 year. (40 օգտատեր)	40	26.12.2020	25.12.2021

ՉԱՓԱՐԱԺԻՆ/ԼՈՏ 4

Symantec Endpoint Protection հակավիրուսային համակարգի ուղեկցման արտոնագրի տեխնիկական պայմաններն ու բնութագրերը

Անվանում	Քանակ
Endpoint Protection (SEP-SUB-100-499) (400 կայան)	400